

Վրաց եւ Աղուանից յոյժ շատ են եւ առաքինի¹ քան զԺողովուրդս² խաչահանուացն Յրէից»:

26 Եւ յորժամ զայսպիսի բազում բանս եւ ստեպ թախանձանաւք զաղաչանս դնէին առաջի զաւրավարին Յայոց Վարդանայ երեցունց աշխարհաց աւագ տանուտեարքն³ եւ սեպուիքն՝ բերէին այնուհետեւ եւ զսուրբ Աւետարանն, եղեալ ամենեցունց առ հասարակ զձեռս ի վերայ՝ երդնուին ասելով. «Եթէ դու եւեթ առ վայր մի կարասցես յանձն առնուլ պատճառանաւք զասացեալս թագաւորին եւ զերծուցես զմեզ յորոգայթադիր թշնամւոյն յարձակմանց՝ ամենայն ասացելոց ի քէն լուիցուք եւ արասցուք, դնելով զանձինս մեր ի վերայ ուխտին սրբութեան եւ հեղլով զարիւնս մեր ի վերայ ամենայն աշխարհին փրկութեան: 27 Եւ եթէ⁴ դիպեսցի մեզ թողուլ զաշխարհ եւ զամենայն ստացուածս եւ փախչել յաւտարութիւն՝ ընտրեսցուք հանդերձ կանամբք եւ որդուք, եւ սիրով յանձն առցուք զաղքատութիւն եւ զմուրդութիւն. միայն ի բարկութենս եւեթ ապրեսցուք: 28 Եւ որ ոք թուլացեալ⁵ ի բանիցս յայսցանէ ստեսցէ ուխտիս այսմ, եւ նենգութեամբ որոշեսցի յերդմանէ սուրբ Աւետարանին եւ ի միաբանութենէ բազմութեանս այսորիկ՝ որոշեալ ճեղքեսցի եւ նա նման Յուդայի, որ ճեղքեալ մեկնեցաւ ի գնդէն սուրբ առաքելոցն. եւ բաժին այնպիսւոյն առանց ապաշխարութեան եւ թողութեան ընդ նմին լիցի մատնեալ անշէջ բոցոյն, զոր պատրաստեաց Աստուած սատանայի եւ արբանեկաց նորա: 29 Եւ որ ինչ վնասք եւ կամ գերութիւնք եւ դորդմունք աշխարհաց երեցունց հասցեն՝ յանձնէ այնպիսւոյն եւ միաբանելոցն ընդ նմա խնդրեսցէ վրէժխնդիրն մինչեւ ցյաւիտեան: 30 Իսկ զբարի եւ զաւգտակար պահպանութիւնն, զոր շնորհեալ Փրկչին Քրիստոսի պարգեւեսցէ բազում ոգւոց երեցունց աշխարհացս, վասն թո առ վայր մի հաւանելոյդ մեզ՝ եղիցի մնացեալ Ժառանգութիւնն այն ի փրկութիւն թողութեան ոգւոյ թո եւ ազգի մինչեւ ցյաւիտեան»:

31 Եւ լուեալ զայս ամենայն բանս ի բերանոյ երից աշխարհաց ազատանւոյն՝ զաւրավարին Յայոց Վարդանայ տեառն Մամիկոնէից, տեսեալ եւ զկնքեալ⁶ ամենեցուն ահաւորապէս երդմամբ զսուրբ Աւետարան ուխտին, որոյ առաջի ուխտեցին եւ աւանդեցին կնքով՝ յարտասուս հարեալ յանձն առ

1 SS. չիք եւ առաքինի

2 SS. քան զԺողովուրդն

3 Ձ. տանուտեարացն

4 Ձ. չիք եթէ

5 Ձ. թողյացեալ

6 SS. զկնքել